

**ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՈՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ  
ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ
- Հաճախորդի անձնագիր և սոցիալական ապահովության քարտ (առկայության դեպքում)
- Հաճախորդի հետ բնակվող /խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրեր
- Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև)
- Հայտարարություն ընտանիքի կազմի վերաբերյալ
- Ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
- Տեղեկատվություն (պետ. ռեզիստրից, դեպոզիտարիայից, ռեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին ամսվա շարժի և մնացորդի վերաբերյալ:
- Տեղեկատվություն ստացված փոխառությունների վերաբերյալ
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսեկան աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ(երբ Հաճախորդը և/կամ Երաշխավորը չեն աշխատում):
- Հաճախորդի աշխատանքային գրքույկի և աշխատանքային պայմանագրի պատճենները:
- Ձեռք բերվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (այն դեպքում երբ արդեն ընտրված է ձեռք բերվող բնակարանը):
- Վաճառողի (ամուսնու՝ առկայության դեպքում) անձնագիր և սոցիալական ապահովության քարտ, ՋԱԳՍ-ի վկայական
- Տեղեկանք վաճառվող անշարժ գույքի հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ (ձև 3-րդ) և նրանց անձնագրեր, ծննդյան վկայականներ
- Միասնական տեղեկանք տարածքային անշարժ գույքի կադաստրից սահմանափակումների վերաբերյալ
- Այն դեպքերում, երբ որպես երաշխավոր և/կամ վաճառող հանդես է գալիս իրավաբանական անձը, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության Տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը):
- ՀՀ ԿԲ վարկային ռեզիստրի կամ համագործակցող վարկային բյուրոյի կողմից տրամադրվող ելքային տեղեկատվություն:

Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Վարկային կազմակերպությունը: